ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.02.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/11

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Մասնակից՝ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի տնօրեն Հ. Պետրոսյանի, ներկայացուցիչ՝ Հ. Քոյլոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/56» ծածկագրով գնանշման հարցում, անվտանգության և պահնորդային ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 23.01.2020թ.-ի թիվ 26/26-1/802-2020 գրությամբ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի 21.01.2020թ.-ի թիվ 01/24.3/74-2020 գրության հիման վրա, 23.01.2020թ.-ին «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 24.01.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/11 համարի ծածկագիրը և 03.02.2020թ.-ին նշանակվել է նիստ:

Ընթացակարգի քննությունն ավարտվել է 03.02.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 24.02.2020թ.-ին:

2. <u>«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸը 21.01.2020թ.-ի թիվ 01/24.3/74-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կարիքների համար 2019 թվականի նոյեմբերի 14-ին անվտանգության և պահնորդային ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/56» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի արդյունքում հաղթող ճանաչված մասնակից «ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից) սահմանված ժամկետում Ընկերությանը չի ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագիրը, այն ուժի մեջ մտնելու փաստը

ֆիքսելու վերաբերյալ կնքվելիք լրացուցիչ համաձայնագիրը, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները՝ բանկային երաշխիքների տեսքով:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 45-րդ կետի «բ» ենթակետը՝ Ձեզ ենք ներկայացնում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, Մասնակցի կողմից ներկայացված հայտը և Ընկերության կողմից Մասնակցին ուղղված ծանուցումների լուսապատճենները:»:

3. <u>«Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 21.01.2020թ.-ին գրությամբ դիմել է «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.01.2020թ.-ի թիվ 26/26-1/802-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում քննվող ՍՅ-ԼՕ-2020/11 ծածկագրով ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) վերաբերյալ հայտնելով դիրքորոշումս նշեմ, որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության (այսուհետ նաև Ընկերություն) պահանջը «ՏՐԱՆՍ ՍՖԵՐ» ՍՊ ընկերությանը (այսուհետ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ հիմնավորված չէ հետևյալ պատճառաբանություններով:

Ընկերությունը Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնուսկիցների ցուցակում ներառելու գրությամբ մատնանշել է հետևյալ փաստական հանգամանքները՝

1. Մասնակիցը չի ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագիրը,

2. Պայմանագիրը ուժի մեջ մտնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ կնքվելիք լրացուցիչ համաձայնագիրը,

3. Որակավորման ապահովումները՝ բանկային երաշխիքի տեսքով:

Հայտնեմ, որ Մասնակցի կողմից 16.12.2019 թվականին ներկայացվել է հաստատված պայմանագիրը և Ընկերության կողմից այն չներկայացնելու պնդումը անհիմն է և նվազագույնը ոչ ճիշտ: Պայմանագիրը ուժի մեջ մտնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ կնքվելիք լրացուցիչ համաձայնագիրը և բանկային երաշխիքը չի ներկայացվել այն հիմնավորմամբ, որ միաժամանակյա բանակցությունները անցկացվել են օրենքի խախտմամբ, որը չէր կարող առաջացնել կատարման և/կամ այլ հետևանքներ: Բանակցությունների արդյունքում գնային առաջարկը «Պահապան1» ՍՊ ընկերության կողմից իջեցվել է ինքնարժեքից, որի արդյունքում մենք նույնպես նվազեցրել ենք գինը, իսկ Հանձնաժողովի ինքնարժեքից նվազեցնելը բացառելու փոխարեն հակառակը թույլատրել է այն և ըստ էության դրել ինձ անելանելի դրության մեջ հանգեցնելով անբարեխիղճ մրցակցության, որը հակասում է գնումների սկզբունքներին:

Մասնավորապես. Գնումների մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Գնումների մասին ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ ենթակետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Գնումների մասին ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝

1) երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում

հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ.

2) (...):

Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: (...):

Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 5-ի ա ենթակետի համաձայն՝ ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները): Նույն կետի 5-ի զ ենթակետի համաձայն՝ բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե դրան ներկա մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը, ապա գնահատող հանձնաժողովը կարող է բանակցությունների արդյունքում ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից՝ պայմանով, որ՝

- միևնույն գնման առարկայի բնութագրերով տվյալ օրացուցային տարում արդեն իսկ կազմակերպվել է առնվազն մեկ գնման մրցակցային ընթացակարգ, որը չկայացած է հայտարարվել մասնակիցների ներկայացրած գները գնման հայտով սահմանված գինը գերազանցելու հիմքով պայմանավորված.

ընտրված մասնակցի հետ կնքվող պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքներն ու պարտականություններն ուժի մեջ են մտնում գնման հայտով սահմանված գինը գերազանցող չափով լրացուցիչ ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման

վրա կողմերի միջև համաձայնագիր կնքելու դեպքում: Ընդ որում համաձայնագիրը կնքվում է լրացուցիչ ֆինանսական միջոցները նախատեսվելուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետները երկարաձգելով պայմանագրի կնքման օրվանից մինչև համաձայնագրի կնքման օրն ընկած ժամանակահատվածով: Սույն պարբերության համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե կնքելուն հաջորդող երեսուն օրացուցային օրվա ընթացքում լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:

Վերոհիշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում պետք է փաստել, որ Օրենսդիրը սահմանել է գնային առաջարկի ներկայացման համար վավերապայման, այն մասով որ այն պետք է ինքնարժեքի, շահույթի և ավելացված արժեքի հարկի ընդհանրական բաղադրիչներից և միևնույն ժամանակ ներկայացված գնային առաջարկը չի կարող պակաս լինել ինքնարժեքից, որի վերաբերյալ նշում պետք է առկա լինի նաև հրավերում: Իսկ գնումների ընթացակարգերի հանձնաժողովները գների նվազեցման նպատակով կարող են վարել բանակացություններ, որտեղ հաղթող կարող է ճանաչվել բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակիցը, սակայն ընդհանուր կանոնի համաձայն ոչ պակաս քան ինքնարժեքը: Իսկ եթե ինքնարժեքից պակաս գնային առաջարկի հիման վրա կնքվի համապատասխան պայմանագիր, ապա այն կառաջացնի անվավերության հիմքեր, ինչպես նաև ինքնարժեքից ցածր գնային առաջարկի թույլ տալու դեպքում այլ անձանց համար կստեղծվի անբարեխիղճ մրցակցություն:

Նշվածը իր հերթին համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել, որ Պատվիրատուն իրականացրել է բանակցություններ, որի արդյունքում մասնակիցները ներկայացրել են նոր գնային առաջարկներ, որոնք ինքնարժեքից ցածր են և ըստ էության 25.11.2019 թվականի թիվ 3 արձանագրությունը ոչ իրավաչափ է և ենթակա վերացման, քանզի նույն արձանագրությամբ պետք է արձանագրվեր ինքնարժեքից ցածր գնային առաջարկի փաստն ու Ընթացակարգը հայտարարվեր չկայացած կամ չթույլատրվեր գնային առաջարկի հետագա նվազեցումը: Այսինքն Հանձնաժողովի ոչ բաեխիղճ վերաբերմունքի պատճառով հայտվել եմ ծայրահեղ անբարեխիղճ պայմաններում և հակամրցակցային գործողությունների արդյունքում ստիպված գինը իջել եմ ավելին քան նպատակահարմար էր, ուստի կայացված որոշումը իրավաչափ չէ:

Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի «Գնումների կազմակերպման» կարգը հաստատելու մասին 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տփալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են՝ պայմանագրով

նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն մասնակցի կողմից պարտավորությունների խախտման դեպքում է նոր միայն առկա նրան գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր, այսինքն նշված գործընթացը պարտավորությունների խախտման հետևանք է և դրա համար նախատեսված պատասխանատվության միջոց: Իսկ եթե առկա են պարտավորության խուսխտման համար մեղքի բացակայության հիմքեր, ապա վերանում են նաև հետևանքները՝ պատասխանատվության միջոցները, իսկ սույն դեպքում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Սույն դեպքում հաշվի առնելով այն հանգամանքը, որ թիվ «ԲԵՏ-ԳՀԾՁԲ-19/56» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում Մասնակցի գործողությունները պայմանավորված են Հանձնաժողովի անօրինական գործողություններով որն ըստ էության բացառում է մեղքի առկայությունը, ուստի նաև պատասխանատվության հիմքերը, բացի այդ Ընկերության թիվ «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/56» ծածկագրով գնման ընթացակարգը բողոքարկվել է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին և բողոքի քննության վերաբերյալ դեռևս առկա չէ որոշում և միգուցէ նաև այն բողոքարկվի դատական կարգով, ուստի մինչ գնման ընթացակարգի բողոքարկման վերաբերյալ վերջնական որոշման կայացումը, հնարավոր չէ արձանագրել մասնակցի ստանձնած պարտավորությունների խախտումը և այդ հիմքով Ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Պայմանավորված վերոգրյալով խնդրում եմ մերժել «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերության պահանջը՝ «ՏՐԱՆՍ ՍՖԵՐ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ:»:

4. <u>ՍՑ-LO-2020/11 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից անվտանգության և պահնորդային ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/56» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, հայտ են ներկայացրել նաև «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն և «Պահապան1» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 21.11.2019թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով, գնային առաջարկի նվազեցման նպատակով, որոշել է գնման ընթացակարգի մասնակիցներին հրավիրել բանակցությունների, 2019 թվականի նոյեմբերի 25-ին ժամը 11:00-ին (20 րոպե տևողությամբ) ք. Երևան Զ. Անդրանիկի փող. 1 հասցեում:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 25.11.2019թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/56» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել նվազագույն գնային առաջարկ ներկայացրած «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ին, որին սահմանված կարգով, անգործության ժամկետի ավարտից հետո, առաջարկվել է կնքել համապատասխան պայմանագիր:

Նույն արձանագրության համաձայն՝

Մասնակցի անվանումը	ՉԱՓԱԲԱԺՆԻ ՀԱՄԱՐԸ՝ 1 Անվտանգության և պահնորդային ծառայություններ	
	«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մաս	
	Հայտով ներկայացված գնային առաջարկ	Բանակցությունների արդյունքում ներկայացված գնային առաջարկ

	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ
«ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ» ՍՊԸ	15540000	15540000	15540000	15540000
«Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ	26500000	31800000	26500000	31800000
«Պահապան1» ՍՊԸ	32000000	38400000	32000000	38400000

Մասնակցի անվանումը	ՉԱՓԱԲԱԺՆԻ ՀԱՄԱՐԸ՝ 2 Անվտանգության և պահնորդային ծառայություններ			
	«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մաս			
	Հայտով ներկայացված գնային առաջարկ		Բանակցությունների արդյունքում ներկայացված գնային առաջարկ	
	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ
«ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ» ՍՊԸ	27720000	27720000	26450000	26450000
«Պահապան1» ՍՊԸ	32000000	38400000	22083333,3	26500000
«Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ	32600000	39120000	32600000	39120000

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից gnumner.am կայքում 29.11.2019թ.-ին հրապարակվել է «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ կարիքների համար անվտանգության և պահնորդային ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/56» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին տեղեկատվությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը՝ 04.12.2019թ.-ը ներառյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.01.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հաշվի առնելով, որ «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/56» ծածկագրով՝ անվտանգության և պահնորդային ծառայությունների ձեռքբերման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից «ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ» ՍՊԸ-ն սահմանված

ժամկետում չի ներկայացրել իր կողմից հասատատված պայմանագրի ամբողջությամբ, պայմանագիրն ուժի մեջ մտնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ կնքվելիք լրացուցիչ համաձայնագիրը, պայմանագրի և որակավորման ապահովումները բանկային երաշխիքների տեսքով, ուստի գնահատող որոշել է, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի հիմքով, «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ին զրկել պայմանագիր ստորագրելու իրավունքից: «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/56» ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով հայտարարվել է չկայացած, քանի որ երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից «Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը գերազանցում է տվյալ ընթացակարգի շրջանակում ձեռք բերվող ծառայության գնման հայտով սահմանված գինը (նախորդ տարվա ընթացքում նմանատիպ գործարքով հաստատված գինը): «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/56» ծածկագրով ընթացակարգը 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել հաջորդաբար տեղ զբաղեցրած «Պահապան1» ՍՊԸ-ին, և վերջինիս սահմանված կարգով առաջարկել կնքել համապատասխան պայմանագիր:

«Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն հայտով ներկայացված գնային առաջարկով թիվ 2-րդ չափաբաժնի համար առաջարկել է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով՝

Չափա-բաժինների համարները	**Ծառայության անվանումը**	**Ինքնարժեք /տառերով և թվերով/**	**Շահույթ /տառերով և թվերով/**	**ԱԱՀ** /տառերով և թվերով/**	**Ընդհանուր գինը /տառերով և թվերով/**
1	***2***	***3***	*4*	***5***	***6=3+4+5***
1	Անվտանգության և պահնորդային ծառայություններ N1	13 986 000 /տասներեք միլիոն ինը հարյուր ութսուն վեց հազար/	1 554 000 /մեկ միլիոն հինգ հարյուր հիսուն չորս հազար/		15 540 000 /տասնհինգ միլիոն հինգ հարյուր քառասուն հազար/
2	Անվտանգության և պահնորդային ծառայություններ N2	24 930 000 /քսան չորս միլիոն ինը հարյուր երեսուն հազար/	2 790 000 /երկու միլիոն յոթ հարյուր իննսուն հազար/		27 720 000 /քսան յոթ միլիոն յոթ հարյուր քսան հազար/

«Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն բանակցությունների արդյունքում ներկայացված գնային առաջարկով առաջարկել է թիվ 1-ին չափաբաժնի համար պայմանագիրը կատարել 15 540 000 ՀՀ դրամ գումարով (առանց ԱԱՀ), իսկ թիվ 2-րդ չափաբաժնի համար՝ 26 450 000 ՀՀ դրամ գումարով (առանց ԱԱՀ):

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.01.2020թ.-ի թիվ 26/26-1/802-2020 գրությամբ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Նույն կետի 14-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերոնշյալ իրավակարգավորումների համադրված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն ու պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ

վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են, որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ իր գործողություններով (անգործությամբ) պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից անվտանգության և պահնորդային ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/56» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, հայտ են ներկայացրել նաև «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն և «Պահապան1» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.11.2019թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով, գնային առաջարկի նվազեցման նպատակով, որոշել է գնման ընթացակարգի մասնակիցներին հրավիրել բանակցությունների, 2019 թվականի նոյեմբերի 25-ին ժամը 11:00-ին (20 րոպե տևողությամբ) ք. Երևան Զ. Անդրանիկի փող. 1 հասցեում:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.11.2019թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/56» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել նվազագույն գնային առաջարկ ներկայացրած «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ին, որին սահմանված կարգով, անգործության ժամկետի ավարտից հետո, առաջարկվել է կնքել համապատասխան պայմանագիր:

Նույն արձանագրության համաձայն՝

Մասնակցի անվանումը	ՉԱՓԱԲԱԺՆԻ ՀԱՄԱՐԸ՝ 1 Անվտանգության և պահնորդային ծառայություններ

	«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մաս			
	Հայտով ներկայացված գնային առաջարկ		Բանակցությունների արդյունքում ներկայացված գնային առաջարկ	
	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ
«ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ» ՍՊԸ	15540000	15540000	15540000	15540000
«Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ	26500000	31800000	26500000	31800000
«Պահապան1» ՍՊԸ	32000000	38400000	32000000	38400000

Մասնակցի անվանումը	ՉԱՓԱԲԱԺՆԻ ՀԱՄԱՐԸ՝ 2 Անվտանգության և պահնորդային ծառայություններ			
	«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մաս			
	Հայտով ներկայացված գնային առաջարկ		Բանակցությունների արդյունքում ներկայացված գնային առաջարկ	
	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ
«ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ» ՍՊԸ	27720000	27720000	26450000	26450000
«Պահապան1» ՍՊԸ	32000000	38400000	22083333,3	26500000
«Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ	32600000	39120000	32600000	39120000

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից gnumner.am կայքում 29.11.2019թ.-ին հրապարակվել է «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար անվտանգության և պահնորդային ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/56» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին տեղեկատվությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը՝ 04.12.2019թ.-ը ներառյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.01.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հաշվի առնելով, որ «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/56» ծածկագրով՝ անվտանգության և պահնորդային ծառայությունների ձեռքբերման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագրի ամբողջությամբ, պայմանագիրն ուժի մեջ մտնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ կնքվելիք լրացուցիչ համաձայնագիրը, պայմանագրի և որակավորման ապահովումները բանկային երաշխիքների տեսքով, ուստի գնահատող որոշել է, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի հիմքով, «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ին զրկել պայմանագիր ստորագրելու իրավունքից: «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/56» ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով հայտարարվել է չկայացած, քանի որ երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից «Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը գերազանցում է տվյալ ընթացակարգի շրջանակում ձեռք բերվող ծառայության գնման հայտով սահմանված գինը (նախորդ տարվա ընթացքում նմանատիպ գործարքով հաստատված գինը): «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/56» ծածկագրով ընթացակարգը 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել հաջորդաբար տեղ զբաղեցրած «Պահապան1» ՍՊԸ-ին, և վերջինիս սահմանված կարգով առաջարկել կնքել համապատասխան պայմանագիր:

«Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն հայտով ներկայացված գնային առաջարկով թիվ 2-րդ չափաբաժնի համար առաջարկել է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով՝

Չափա-բաժինների համարները	**Ծառայության անվանումը**	**Ինքնարժեք /տառերով և թվերով/**	**Շահույթ /տառերով և թվերով/**	**ԱԱՀ** /տառերով և թվերով/**	**Ընդհանուր գինը /տառերով և թվերով/**
1	***2***	***3***	*4*	***5***	***6=3+4+5***
1	Անվտանգության և պահնորդային ծառայություններ N1	13 986 000 /տասներեք միլիոն ինը հարյուր ութսուն վեց հազար/	1 554 000 /մեկ միլիոն հինգ հարյուր հիսուն չորս հազար/		15 540 000 /տասնհինգ միլիոն հինգ հարյուր քառասուն հազար/
2	Անվտանգության և պահնորդային ծառայություններ N2	24 930 000 /քսան չորս միլիոն ինը հարյուր երեսուն հազար/	2 790 000 /երկու միլիոն յոթ հարյուր իննսուն հազար/		27 720 000 /քսան յոթ միլիոն յոթ հարյուր քսան հազար/

«Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն բանակցությունների արդյունքում ներկայացված գնային առաջարկով առաջարկել է թիվ 1-ին չափաբաժնի համար պայմանագիրը կատարել 15 540 000 ՀՀ դրամ գումարով (առանց ԱԱՀ), իսկ թիվ 2-րդ չափաբաժնի համար՝ 26 450 000 ՀՀ դրամ գումարով (առանց ԱԱՀ):

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Մասնակցի կողմից հայտով ներկայացված գնային առաջարկում ինքնարժեք բաղադրիչը բանակցությունների արդյունքում փոփոխության չի ենթարկվել: Ընդ որում, հարկ է նկատել, որ Մասնակիցը բանակցությունների ընթացքում գինը նվազեցրել է միայն թիվ 2 չափաբաժնի մասով, այն էլ՝ գնային առաջարկով ներկայացված շահույթի բաղադրիչից:

Վերոնշյալով պայմանավորված՝ Մասնակցի կողմից ներկայացված այն հիմնավորումները, որ բանակցությունների արդյունքում Հանձնաժողովի ոչ բարեխիղճ վերաբերմունքի պատճառով Մասնակիցը հայտվել է ծայրահեղ անբարեխիղճ պայմաններում և հակամրցակցային գործողությունների արդյունքում ստիպված գինը իջել է ավելին քան նպատակահարմար էր վերջինիս, ուստի կայացված որոշումը իրավաչափ չէ, Բողոքներ քննող անձը գտնում է անհիմն նաև այն պատճառաբանությամբ, որ Ընթացակարգի քննության ընթացքում Բողոքներ քննող անձի կողմից չարձանագրվեցին Հանձնաժողովի գործողությունների վերաբերյալ որևէ խախտումներ, որոնք կարող էին հանգեցնել Մասնակցի իրավունքների և օրինական շահերի խախտմանը, հատկապես այն դեպքում երբ, «Պահապան1» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված գնային առաջարկում նշված ինքնարժեք բաղադրիչի գումարից պակաս գումար ներկայացնելը չի կարող հանգեցնել Մասնակցի կողմից ծայրահեղ անբարեխիղճ պայմաններում հայտնվելուն: Ընդ որում, բանակցությունների արդյունքում «Պահապան1» ՍՊԸ-ի կողմից գնային նվազեցում իրականացվել է միայն թիվ 2 չափաբաժնի մասով:

Նման պայմաններում, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ Մասնակիցը կաշկանդված չէր պայմանագիր կնքել միայն թիվ 1 չափաբաժնի մասով, իսկ թիվ 2 չափաբաժնի մասով գնային առաջարկ նվազեցնել և արձանագրված սույն ընթացակարգի շրջանակներում դիրքորոշմամբ բերված հանգամանքներով և իրավական հիմքերով ժամանակին՝ գնումների մասին ՀՀ օրենքով նախատեսված անգործության ժամանակահատվածում, բողոքարկել կայացված որոշումը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն, որպես ընտրված/հաղթող/ մասնակից, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով պայմանագիրը, հրաժարվել է պայմանագիր կնքելուց: Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.01.2020թ.-ի թիվ 26/26-1/802-2020 գրությամբ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2020/11 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ